# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3
# «ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/38» ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ

**31.07.2026թ.**
**ժամը՝ 11:00**

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ղ. Ղուկասյան

Հանձնաժողովի անդամներ՝

Ժ. Անտոնյան

Ա. Ղազարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Դարբինյան

1. **Գնման ընթացակարգի հայտ ներկայացրած մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.**

Ընդունել ի գիտություն՝

1.1 Համակարգի կողմից 1-ին չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչված «ԲԱՐՍԻՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությամբ, համակարգով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում արձանագրված անհամապատասխանությունների մասին 29.07.2026թ.-ին ծանուցվել է վերջինիս՝ առաջարկելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի պահանջների համաձայն՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում մասնակցի կողմից շտկված ապրանքի ամբողջական նկարագիրը eauction.armeps.am համակարգով ներկայացվել է: 31.07.2026թ. փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում մասնակցի ոչ գնային պայմանները հանձնաժողովի կողմից գնահատվել են բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ-0

2. **<u>Պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին:</u>**

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

2.1. «ԲԱՐՍԻՍ» ՍՊԸ-ի փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում մասնակցի ոչ գնային պայմանները գնահատել բավարար:

1-ին չափաբաժնով ընտրված (հաղթող) մասնակից ճանաչել «ԲԱՐՍԻՍ» ՍՊԸ –ին:

2.2 Հաստատել **«ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/38»** ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Անգործության ժամկետի ավարտից հետո (10 օրացուցային օր) հաղթող մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ կներկայացնվի:

Բոլոր գործողությունները իրականացվել են eauction.armeps.am համակարգի միջոցով:

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ-0

Հանձնաժողովի նախագահ՝ Ղ. Ղուկասյան

Հանձնաժողովի անդամներ՝

Ժ. Անտոնյան

Ա. Ղազարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Դարբինյան